ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

162
(2642)

11 նոյեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 132

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ

ՌԴ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մանիպուլյատիվ եւ ակնհայտ կեղծ տեղեկություններ է հայտնում ոչ միայն ելույթ ունենալիս կամ հարցազրույց տալու ժամանակ, այլ նաեւ պաշտոնական հաղորդագրությունների միջոցով: Խոսքը հատկապես կարեւոր նշանակություն ունեցող հանդիպումներից հետո տարածվող տեղեկատվությունների մասին է: Օրինակ՝2021 թվականի նոյեմբերի 16-ի երեկոյան՝ Ախ նիստից հետո, տեղեկություն տարածվեց, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հեռախոսազրույցից հետո՝ երկու կողմերի տարածած պաշտոնական հաղորդագրությունները համեմատելիս, պարզվեց, որ Փաշինյանը Կրեմլի ռելիզից տարբերվող ռելիզ է տարածել: Օրինակ՝հայկական կողմը մոռացել էր հիշատակել, որ հեռախոսազրույցի նախաձեռնությունը հենց Փաշինյանինն է, ինչպես նաեւ մոռացել է ընդգծել, որ ձեռք է բերվել շփումները շարունակելու համաձայնություն: Փոխարենը հայկական կողմի տարածած հաղորդագրության մեջ խոսվում է Փաշինյանի կողմից ադրբեջանցիների հարձակումը ագրեսիա որակելու եւ հայ-ռուսական ռազմավարական համագործակցության հույժ կարեւորության մասին, ինչպես նաեւ վերահաստատվում է հայկական կողմի հավատարմությունը ստորագրած կապիտուլյացիոն ակտի կետերի նկատմամբ: Այսինքն՝ ստացվում է՝ նա ոչ միայն հարցազրույցներ տալիս եւ ելույթներ ունենալիս է կեղծ տեղեկություններ փոխանցում, այլեւ այդպես է անում աշխատակազմի միջոցով:

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ում արշալույսներն այդքան էլ խաղաղ չեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՇՄ ներկա նախարար Հակոբ Սիմիդյանի այստեղ նշանակած կադրերը պայքարում են նախկին նախարար Ռոմանոս Պետրոսյանի նշանակած կադրերի դեմ: «ՊՈԱԿ-ում, այսպես ասած, կադրերի ջարդ է. Սիմիդյանի կադրերը հանդուրժել չեն կարողանում Պետրոսյանի կադրերին: Նոր «իշխանավորները» հներից (իրականում, սակայն, իրենց իսկ թիմակիցներից) ուզում են ազատվել ու դա անում են բացահայտ, ակնառու ձեւով, ինչը նկատելի է մյուս աշխատակիցների համար նույնպես»,- ասաց թե՛ Անտառային կոմիտեի, թե՛ դրա ենթակայությամբ գործող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի նիստուկացին բավականին քաջատեղյակ մեր զրուցակիցը: Անտառային կոմիտեից որպես մեկնաբանություն մեզ ասացին, որ իրենց մոտ «արշալույսները շատ էլ խաղաղ են, լարված մթնոլորտ չկա»: Ի դեպ, նշենք, որ նույն քաղաքականությունը նաեւ նախկին նախարար Պետրոսյանն էր բանեցնում՝ փորձելով ազատվել իրենից առաջ նշանակված կադրերից: «Ժողովուրդ» օրաթերթը փաստաբան Մարատ Ատոմյանից տեղեկացավ, որ Ռոմանոս Պետրոսյանի պաշտոնավարման օրոք ազատված աշխատակիցներն այժմ 90 տոկոս դեպքերում հաղթում են դատարաններում:



Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի՝դեռեւս հոկտեմբերի 8-ին Աջափնյակի բնակիչների հետ ունեցած հանդիպումն այդքան էլ հարթ չի անցել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ավինյանին անակնկալի է բերել հանգամանքը, որ, ի թիվս աջափնյակցիների, իր հետ հանդիպման է գնացել նաեւ Կոնդի մի բնակչուհի, որ կոնկրետ պատասխաններ ստանալու ակնկալիքով բավականին սուր հարցեր է ուղղել նախկին փոխվարչապետին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կոնդեցի տիկին Նաիրան է եղել այդ բնակչուհին, որ Ավինյանին հիշեցրել է, թե ինչպես էր վերջինս դեռեւս փոխվարչապետ եղած ժամանակ խոստանում զբաղվել Կոնդի վերաչափագրման ու վերակառուցման հարցերով, այնինչ արդեն 4 տարի սայլը տեղից չի շարժվում, եւ Կոնդի խնդիրները միայն ավելանում են: Միջադեպի մասով մենք Երեւանի քաղաքապետարանի լրատվական ծառայությունից մեկնաբանություն խնդրեցինք: Պատասխանի փոխարեն՝ վերոնշյալ այցի մասին պատմող գեղեցիկ ու բարի ռեպորտաժ ուղարկեցին մեզ, որտեղ, բնականաբար, տիկնոջ ու Ավինյանի խոսակցությունը ոչ ամբողջական էր, մոնտաժված տարբերակով էր ներկայացված: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տիկին Նաիրան նշեց, որ բավականին դժգոհ է այդ հանդիպումից, ապա շարունակեց. «Ավինյանը փոխվարչապետ եղած ժամանակ էլ ասաց, որ Կոնդով զբաղվում է, կառուցապատման ծրագիր կա, այսինքն՝ կառուցապատում պետք է լիներ, բայց երբ ժամանակը եկավ, որ պետք է ասեին՝ ով է հաղթողը, ու երկրորդ փուլին անցնեին, այդպես էլ տեղի չունեցավ: Նրա հանդիպումից հետո հասկացա, որ քաղաքապետարանը Կոնդի հետ կապված հարցերում որոշ մարդկանց հետ համագործակցում է, դրա համար էլ ամեն անգամ այսպես հետաձգվում է: Ես իր հետ խոսում էի, նայում էի աչքերի մեջ, նա լուռ լսում էր, բայց որեւէ կերպ չէր արձագանքում: Ինքն իր համար յոթերորդ երկնքում էր, ես էլ իր համար «աղքատի ռադիո» ասես լինեի»,- դժգոհեց Կոնդի խաբված բնակչուհին:

Սեպտեմբերյան էսկալացիան երկարացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի գործունեության ժամկետը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝2022 թվականի սեպտեմբերի 12-ի-13-ի հարձակումից առաջ ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը հանդես է եկել ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի դեմ մի յուրօրինակ նախաձեռնությամբ: Նա, որ մշտապես բողքում է ԿԳՄՍ նախարար Դումանյանի գործունեությունից, նաեւ ստորագրահավաք է արել՝ շուրջ 20 պատգամավորների մասնակցությամբ, որպեսզի գործադիր մարմինը նախարարի պաշտոնազրկման գործընթաց սկսի: Երկրում սահմանային լարված իրավիճակով պայմանավորված՝ գործընթացն իր վերջնարդյունքին չի հասել: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի հետ, որը, մեր հարցադրումներին ի պատասխան, հակիրճ ասաց. «Ձեր տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում»:

ՊԱՏՐԱՍՏ Է ԼՍԵԼ

«ԻՆՁ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ» Գ. ԾԱՌՈՒԿՅԱՆ

Քլից զրույց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ:

-Պարոն Ծառուկյան, վերջին շրջանում հատկապես Ձեր նկատմամբ քննադատությունների հոսքը մեծացել է. հոդվածներ են հրապարակվում, տարբեր ակտիվիստներ նույնիսկ դատական հայցերով են Ձեզ սպառնում՝ կապված Ձեր կողմից կառուցվող այն կամ այն նախագծի հետ: Ինչո՞վ եք սա բացատրում, եւ ի՞նչ միտումների մասին է սա խոսում:

-Եթե ուշադրություն եք դարձրել, ինձ մեղադրում են մեկ բանում՝ կառուցելու համար՝ Ծառուկյանը սա է կառուցում, մյուսն է կառուցում: Անընդհատ այդ «կառուցել» բառն է, ուրիշ բան չկա, այսինքն՝ ստացվում է, որ մեր երկրում կառուցելը հանցանք է: Բա այդ դեպքում ո՞նց եք պատկերացնում պետության վերականգնումը, պետության զարգացումը: Ո՞նց են պատկերացնում աղքատության կրճատումը, աշխատատեղերի ստեղծումը, բյուջեի մեծացումը, թոշակների ու աշխատավարձերի ավելացումը: Ես ամբողջ կյանքս կառուցել եմ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, եկեղեցիներ, ճանապարհներ, գործարաններ, հյուրանոցներ: Դրանք Հայաստանում են, ու այնտեղ աշխատում են մեր հայրենակիցները, գուցե նաեւ այդ հոդվածագիրների, ակտիվիստների, նրանց պատվիրատուների հարազատները:

-Իսկ հնարավո՞ր է, որ Ձեր դեմ սկսված արշավը ստիպի Ձեզ փոխել պլանները:

-Արշավ ասածն էլ մի մեծ բան չէ: Գրում են, խոսում են, ի՞նչ ասեմ, դա էլ իրենց իրավունքն է, բայց մի օր կազմակերպելու եմ այդ ակտիվիստների, հոդվածագիրների համար էքսկուրսիա որեւէ գործարան: Թող իրենց աչքով տեսնեն՝ ինչ է ռեալ աշխատանքը, ինչպես են այնտեղ հարյուրավոր մարդիկ իրենց արդար քրտինքով վաստակում, արդար քրտինքով «պրեմիաներ» ստանում ու ընտանիքները պահում: Ինձ մոտ տպավորություն է, որ այդ ակտիվիստները իրական կյանքը չգիտեն՝ ինչ բան է, չեն պատկերացնում՝ ինչ դժվար է բան կառուցել, պահել, աշխատացնել, ինչ ահռելի պատասխանատվություն է դա հազարավոր ընտանիքների հանդեպ: Ինչ վերաբերում է պլանները փոխելուն. ի՞նչը պիտի փոխվի, իմ գենե՞րը, իմ տեսա՞կը: Իրոք չեմ հասկանում: Իմ ծնողները 80-անց մարդիկ են, ամեն օր գնում են աշխատանքի: Ամեն օր: Ես իմ կողմից կառուցվող նախագծերին երբեք կողքից չեմ նայել, միշտ եղել եմ ակտիվ մասնակից, բանվորի հետ գործ եմ արել, ճարտարապետի հետ աշխատում եմ, շինարարի հետ աշխատում եմ: Իմ ձեռքով եմ քարը քարի վրա դնում: Իմ տղաները մեծացել են այդ մթնոլորտում, որտեղ ամոթը ծուլությունն է, որ բարիք կարելի է ստեղծել միայն աշխատանքով: Մեր ընտանիքը կառուցել եւ կառուցելու է գործարաններ, որ մարդիկ աշխատեն, շենքեր, որտեղ մարդիկ կապրեն, ընտանիքներ կկազմեն, երեխաներ կունենան, կառուցելու ենք կրթական հաստատություններ, ստեղծելու ենք աշխատատեղեր, որ մարդիկ աշխատանք ունենան ու մարդավայել ապրեն: Եթե հարցին ավելի լայն նայենք, ապա հարցը ո՛չ Ծառուկյանն է, ո՛չ մյուսը, ո՛չ էլ երրորդ ինչ-որ մեկը, ամենակարեւորը մտածելակերպն է, տիրող մթնոլորտը: Այն երկրներում, որտեղ կառուցելը, ստեղծելը հարգված ու գնահատված գաղափար է, այդ երկրները զարգանում են, բարգավաճում, մարդիկ ապրում են լավ, իսկ որտեղ կառուցողի ու ստեղծողի հանդեպ չարանում են, արհեստական խնդիրներ են ստեղծում, այդ երկրներում չի լինում ոչ մի զարգացում, լինում է միայն աղքատություն ու չքավորություն: Ես միշտ պատրաստ եմ լսել առաջարկներ, թե որտեղ ինչը կարելի է այլ կերպ անել, լավացնել, ինչպես եղավ Հիսուս Քրիստոսի արձանի դեպքում: Միշտ հարգանքով եմ վերաբերվում նման նախաձեռնություններին: Եթե այսօր լինեին այնպիսի առաջարկներ, որ կառուցվելիքը, մեր աշխատանքը ավելի լավը կդարձնեին բոլորի համար, ես սիրով կլսեի ու կընդունեի, իսկ այսպես տպավորություն է, թե նպատակն ուղղակի խանգարելն է:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ

2020 թվականին հայտարարված ռազմական դրության եւ զորահավաքի շրջանակներում ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններից ներգրավվել են տրանսպորտային միջոցներ, որոնց ռազմական գործողությունների ժամանակ հասցվել է վնաս: Այդ առթիվ կառավարությունը նոր որոշում է ընդունել, որը նպաստակ ունի կարգավորել այդ հարաբերությունները:

Բանն այն է, որ «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գնահատման արդյունքներով դրական եզրակացություն է կայացվել թվով 26 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ՝ ընդհանուր 71.021,6 ՀՀ դրամի չափով (26 տրանսպորտային միջոցներից 12-ն ընդհանրապես ոչնչացված են եւ առկա չեն, 2-ը կրել են այնպիսի վնաս, որը հնարավոր չէ վերականգնել նպատակային նշանակությամբ օգտագործելու համար, 12-ը վնասված վիճակով վերադարձվել են սեփականատերերին եւ կարող են օգտագործվել նպատակային նշանակությանը համապատասխան): Միաժամանակ, անհրաժեշտություն է առաջացել համապատասխան գումարը ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել ՀՀ կառավարության 2022 թվականի պահուստային ֆոնդից: Այսպիսով, որոշմամբ 26 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տրամադրվող փոխհատուցումների չափերն են հստակեցվում, նախատեսվում է անհրաժեշտ գումարը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել:

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՐԿԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հրամանով՝ խորհրդարանի մեծամասնության՝ «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավորները հերթական գործուղումներին կմեկնեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ղազախստանի Հանրապետությունում տեղի ունենալիք արտահերթ նախագահական ընտրություններին (ըստ երեւույթին՝ դիտորդական առաքելությամբ) մասնակցելու համար այս տարվա նոյեմբերի 18-21-ը Աստանա կգործուղվեն ՔՊ-ական պատգամավորներ Հովիկ Աղազարյանը, Նարեկ Ղահրամանյանն ու Վաղարշակ Հակոբյանը:

ԵԽԽՎ Իրավական եւ մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի նիստին մասնակցելու համար նոյեմբերի 13-14-ը Փարիզ՝ Ֆրանսիայի Հանրապետություն է մեկնելու ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Մեկօրյա այցից հետո Վարդանյանը մոտ տասն օր անց էլ՝նոյեմբերի 23-26-ը, Ռեյկյավիկ՝ Իսլանդիայի Հանրապետություն կմեկնի՝ մասնակցելու ԵԽԽՎ մշտական հանձնաժողովի նիստին: Նշենք, որ Վլադիմիր Վարդանյանի գործուղումների հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ ճանապարհածախսերը, գիշերակացի ու օրապահիկի ծախսերը, ՀՀ պետբյուջեի հաշվին են արվելու, իսկ Աստանա մեկնող ՔՊականների մեկնման հետ կապված ծախսերից միայն գիշերակացի գումարն է ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը հոգալու:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՆԻՍՏԵՐ ՉԵՆ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ

Ազգային ժողովի՝2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, տեւական ժամանակ է՝ նիստեր չի անում եւ մարդկանց չի հրավիրում՝ լսելու, բացահայտումներ անելու: Բանն այն է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը հանձնաժողովին մեծ թվով փաստաթղթեր է ուղարկել, որոնք ուսումնասիրման ենթակա են: Եվ հենց դա է պատճառը, որ տեւական ժամանակ է՝նիստեր չեն հրավիրվում, քանի որ հանձնաժողովի փորձագետները չեն հասցրել այդքան մեծ ծավալի փաստաթղթերն ուսումնասիրել հետագա գործընթացները կազմակերպելու համար: Մյուս կողմից՝ նկատենք, որ այստեղ խնդիրը ոչ միայն ժամանակն է, այլեւ այդ հանձնաժողովի անդամների եւ փորձագետների պրոֆեսիոնալիզմը, քանի որ հանձնաժողովը կառուցված է բացառապես իշխանության անդամներից, իսկ իշխանական գործիչները իրենց ոչ պրոֆեսիոնալիզմով վաղուց են հայտնի: Ու թեեւ տեւական ժամանակ է՝ ոչինչ չի արվում, այնուամենայնիվ, հանձնաժողովի գործունեության ժամկետն է սպառվում: Իհարկե, մի անգամ այդ ժամկետը վեց ամսով երկարաձգվել է եւ, ըստ էության, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի գործողության ժամկետի ավարտին քիչ ժամանակ է մնացել՝ ընդամենը 5 ամիս: Ի՞նչ կհասցնեն պարզել այդ ժամանակում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ԱՅՑԻՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը կայցելի Հայաստան: Այս մասին պարզ դարձավ երեկ, երբ Նիկոլ Փաշինյանի եւ Վլադիմիր Պուտինի հեռախոսազրույցից հետո պաշտոնական հաղորդագրություն տարածվեց:

ՌԴ նախագահը Հայաստան կգա նոյեմբերի 23-ին Երեւանում կայանալիք ՀԱՊԿ երկրների ղեկավարների գագաթնաժողովին մասնակցելու համար: Կրելմի մամուլի ծառայությունը եւս հաղորդագրություն է տարածել հեռախոսազրույցի առնչությամբ եւ նշել, որ ՀԱՊԿ երկրների ղեկավարների գագաթնաժողով է լինելու, սակայն Պուտինի այցի վերաբերյալ տեղեկություն չի տարածվել:

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության մամուլի վարչության ղեկավար Մարիա Զախարովան իր հերթին հայտարարել է, որ Մոսկվան կշարունակի Երեւանին եւ Բաքվին սատարել խաղաղության հասնելու եւ Հարավային Կովկասում կայունություն ու բարգավաճում ապահովելու գործում:

Խոսելով Ղարաբաղում տեղակայված ռուսաստանցի խաղաղապահների հասցեին ադրբեջանական մամուլում տեղ գտած քննադատական մեկնաբանությունների մասին՝ Զախարովան ասել է, թե Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների վերջին հանդիպման ընթացքում բարձր է գնահատվել այդ զորախմբի դերը:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունները կարող են դրական լինել միայն այն դեպքում, եթե կարգավորվեն Երեւանի եւ Բաքվի հարաբերությունները: Այս մասին ասել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Նա նշել է, թե հայկական կողմի հետ վերջին հանդիպումը եղել է Պրահայում, որի ժամանակ Հայաստանի ղեկավարին ասել են, որ Ադրբեջանի հետ դրական հարաբերություններից հետո Թուրքիայի հետ հարաբերությունները եւս կընթանան դրական ուղղությամբ: Ավելի վաղ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուն ասել էր, որ պատրաստ է հանդիպել Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ, բայց ամսաթվի հարցում որոշակիություն առայժմ չկա:

Հիշեցնենք, որ մինչ Էրդողանի հետ հանդիպումը կայացել էր քառակողմ հանդիպում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի մասնակցությամբ, ինչպես նաեւ Փաշինյան-Էրդողան-Ալիեւ ոչ ֆորմալ հանդիպումը: Իսկ դրանից առաջ վերջին անգամ Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարները հանդիպել էին 2009 թվականին, երբ Թուրքիայի Բուրսա քաղաքում ազգային հավաքականների ֆուտբոլային հանդիպման ժամանակ հանդիպեցին այն ժամանակվա նախագահներ Սերժ Սարգսյանը եւ Աբդուլլահ Գյուլը:

ՕՐԱԿԱՐԳ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ «ԽԱՂԱՂ ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՉԷ

Երկու օր առաջ՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի արած հայտարարությունները եւս մեկ անգամ ապացուցում են, որ Ադրբեջանի իշխանությունների ագրեսիվ հավակնությունները շարունակում են սպառնալիք լինել Հարավային Կովկասի եւ ավելի լայն տարածաշրջանի անվտանգության եւ կայունության համար: Այս մասին երեկ՝ կառավարության նիստի սկզբում, նշել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ Ադրբեջանի նախագահը փորձ է անում պայմանավորվածությունները եւ պարտավորությունները չկատարելու համար մեղադրել Հայաստանին եւ կառավարությանը, փաստում է տրամագծորեն հակառակը: «Տխրահռչակ այդ ելույթով Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն խախտել է հոկտեմբերի 31-ին Սոչիում ընդունված եռակողմ հայտարարությամբ արձանագրված գրավոր պայմանավորվածությունը՝ ուժի կիրառումից եւ ուժի կիրառման սպառնալիքից ձեռնպահ մնալու մասին: Ի հեճուկս Սոչիի հոկտեմբերի 31-ի եւ սույն թվականի հոկտեմբերի 6-ի Պրահայի հայտարարության՝ Ադրբեջանի ղեկավարը բարձրաձայնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ ունեցած նկրտումների մասին՝ հայաստանյան մի շարք բնակավայրերի անվանումների ու այլանունների սպառնալից օգտագործմամբ խաղաղ բնակչությանը ահաբեկելու ակնհայտ մղումով»,- նշում է Փաշինյանը::

ՀՀ վարչապետը նաեւ թվային տվյալներ է ներկայացրել: Ըստ այդմ, 2020 թվականի դեկտեմբերին Ադրբեջանը ապօրինի կերպով օկուպացրել է Լեռնային Ղարաբաղի Խծաբերդ եւ Հին թաղեր բնակավայրերը եւ հարակից տարածքները՝ ի հեճուկս 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրականացվում է կրակի ամբողջական դադարեցում, դադարեցվում են բոլոր ռազմական գործողությունները, եւ կողմերը մնում են իրենց զբաղեցրած դիրքերում:

«Ադրբեջանը նմանատիպ օկուպացիա իրականացրել է նաեւ 2022 թվականի մարտին՝ ներխուժելով Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերի պատասխանատվության գոտի եւ խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ սահմանված շփման գիծը, եւ հիմա Ադրբեջանի նախագահը հպարտությամբ դա անվանում է «օպերացիա Փառուխ»: Ադրբեջանը գրեթե ամենօրյա ռեժիմով խախտում է հրադադարի ռեժիմը նաեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ հաստատված շփման գծում՝ զուգահեռաբար հայտարարելով, թե Լեռնային Ղարաբաղ գոյություն չունի», - հավելում է նա:

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում խաղաղապահները տեղակայվում են 5-ամյա ժամկետով՝ հերթական հնգամյա ժամկետների ինքնաբերաբար երկարացումով: «Կրկնում եմ, ինքնաբերաբար երկարացումով: Սա, ըստ էության, նշանակում է, որ խաղաղապահները Լեռնային Ղարաբաղում տեղակայված են անժամկետ, քանի դեռ հասցեագրված չեն Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության հետ կապված բոլոր հարցերը, եւ փարատված չեն Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգային բոլոր մտահոգությունները: 2021 թվականի նոյեմբերի 26-ի եւ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի եռակողմ հայտարարություններով Ադրբեջանի նախագահն ինքն է ընդունել խաղաղապահների անկյունաքարային, կարեւոր ներդրումը նրա տեղակայման գոտում անվտանգության եւ կայունության ապահովման գործում, ավելին՝ ճանաչել է տարածաշրջանում իրավիճակի կայունության գործում խաղաղապահների հետագա ջանքերի պահանջվածությունը: Սոչիի երկու հայտարարությունների տակ ստորագրելով եւ այս արձանագրումներն անելուց հետո, առանց Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգության եւ իրավունքների ապահովման միջազգային հստակ երաշխիքների, խաղաղապահների դուրսբերման խոսույթ զարգացնելը ոչ միայն նշված եռակողմ հայտարարությունների խախտում է, այլեւ Լեռնային Ղարաբաղի հայության ցեղասպանության նախապատրաստություն», - շարունակում է նա:

Նրա խոսքով՝ նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետում չկա ո՛չ միջանցք արտահայտություն, ո՛չ Հայաստանի Հանրապետության որեւէ տարածքի, ո՛չ որեւէ տեղանվան հիշատակում: «Եռակողմ հայտարարության 6-րդ կետով Լաչինի միջանցքը ոչ միայն ճանապարհ է կամ տրանսպորտային ուղի, այլեւ 5 կիլոմետր լայնությամբ տարածք: 9-րդ կետում որեւէ նման տարածքի հիշատակում չկա, եւ խոսք է գնում միայն հաղորդակցության՝ տրանսպորտային հաղորդակցության մասին:

«Եռակողմ հայտարարության 6-րդ կետով Լաչինի միջանցքը գտնվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի վերահսկողության ներքո: 9-րդ կետում ասվում է, որ Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ հսկողություն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ծառայությունը: Այս հարցը լրացուցիչ պարզաբանված է նաեւ Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ի «Լեռնային Ղարաբաղում խաղաղության ապահովման մասին» թիվ 695 հրամանագրի 3-րդ կետով, որտեղ ասվում է, մեջբերում եմ. «Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայությանը՝ իրականացնել հսկողություն Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ տրանսպորտային կապի ապահովման նկատմամբ՝ քաղաքացիների, ապրանքների, տրանսպորտային միջոցների անխոչընդոտ երկկողմանի շարժման համար»»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԻ ՓԱՐԻԶ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը նոյեմբերի 10-ից աշխատանքային այցով կգտնվի Փարիզում:

ԱԳՆ-ից հայտնում են, որ այցի շրջանակներում նախատեսված է նախարար Միրզոյանի հանդիպումը Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննայի եւ ֆրանսիացի այլ գործընկերների հետ:

ՀՀ ԱԳ նախարարը կմասնակցի նաեւ Փարիզի խաղաղության հինգերորդ համաժողովին:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի պատվիրակության անդամներն ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Շիրակ Թորոսյանի ուղեկցությամբ նոյեմբերի 10-ին այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հյուրերը ծաղիկներ են խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ, լռությամբ հարգել Սուրբ նահատակների հիշատակը: Պատվիրակության անդամները եղել են նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, ծանոթացել ցեղասպանությունը փաստող ցուցանմուշներին եւ գրառում կատարել Պատվավոր հյուրերի հուշամատյանում՝ նշելով. «Խաղաղություն օրհնված Հայաստանի հոգուն եւ երկնքին»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Աշխատանքային այցով եվրոպական երկրներում գտնվող ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ, ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, ՀՅԴ միջազգային կապերի Եվրոպայի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանի եւ նույն գրասենյակի աշխատակից Սարինե Աբրահամյանի ուղեկցությամբ, նոյեմբերի 8-ին հանդիպել է Եվրոպայի սոցիալիստական կուսակցության ղեկավարության՝ կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալներ Յոնեք Պոլենի, Սաար Վան Բյուրենի եւ գործադիր վարչության անդամ Քարոլին Ջենեզի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են «Հայ հեղափոխական դաշնակցության» եւ Եվրոպայի սոցիալիստական կուսակցության հարաբերությունների ընդլայմանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ Հայաստանում սոցիալ-դեմոկրատիայի ուժեղացման հեռանկարները: Ընդգծվել է «Հ. Յ. Դաշնակցության» եւ եվրոպական գաղափարակից կուսակցությունների կապերի խորացման անհրաժեշտությունը:

Առաջիկայում ձեռնարկվելու են գործնական քայլեր՝ հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու ուղղությամբ:

ԶԵԿՈՒՅՑ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Դատավորների միջազգային միությունը հրապարակել է դատավորների անկախության եւ կարգապահական վարույթների վերաբերյալ 2022 թվականի զեկույցը: Այն ընդունվել է Թել Ավիվում սեպտեմբերին կայացած Դատավորների միջազգային միության տարեկան 64-րդ համաժողովում, որին մասնակցել են 94 երկրից 300 դատվիրակ: Արդյունքում զեկույցն ընդունվել է, որը Դատավորների մությունը ներկայացրել է սոորեւ:

Ի պաշտոնե գործելիս դատավորի վարքագծի հետ կապված կարգապահական վարույթներ

-Ի պաշտոնե գործելիս դատավորի վարքագիծը կարող է կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսանալ: Այնուամենայնիվ, դատական ակտերի բովանդակության կապակցությամբ կարգապահական վարույթները պետք է բացառվեն, եւ դատավորները, որպես կանոն, չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության իրենց կողմից կայացված դատական ակտերի բովանդակային կամ պատճառաբանական մասի համար: Դատական ակտերի հիմնավորվածության, բովանդակային վիճարկման պատշաճ հարթակը վերադաս դատական ատյանն է, այլ ոչ թե կարգապահական վարույթը:

-Շատ երկրներից դատավորների անձեռնմխելիության սկզբունքը ծառայում է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկվելուց զերծ պահելուն՝ կապված իրենց կողմից կայացրած ակտերի բովանդակության հետ:

-Որոշակի իրավական համակարգերում նշված կանոնից շեղումը թույլատրվում է, եթե դատավորը դիտավորությամբ ու անբարեխղճորեն է օրենքը կիրառում հօգուտ կամ ի վնաս կողմի: Այնուամենայնիվ, դատավորների անկախության սկզբունքը կանոնից շեղում ենթադրում է չափազանց զգուշավորությամբ:

Դատավորի մասնավոր կյանքի հետ կապված (ոչ ի պաշտոնե գործելիս) կարգապահական վարույթներ

-Դատավորի՝ ոչ ի պաշտոնե գործունեության, անձնական վարքագծի կապակցությամբ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու առիթ հանդիսանալու հարցն էապես տարբերվում է առանձին իրավական համակարգերում:

-Դատավորի՝ ոչ մանագիտական գործունեության հետ կապված վարքագիծը կարող է հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության համար, եթե այն պարունակում է դատական իշխանության նկատմամբ համընդհանուր հանրային վստահությունը վնասելու ներուժ, այնպես էլ՝ տվյալ դատավորի անաչառության առումով: Որպես կանոն, դատավորի կողմից հանցագործության կատարումը կարող է հանգեցնել կարգապահական տույժի:

-Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի ներգործության ցանկացած միջոցի կիրառման դեպքում պետք է զգուշորեն հաշվի առնվեն դատավորի անձնական իրավունքներն ու օրինական շահերը:

Կարգապահական վարույթների եւ տույժերի (սանկցիաների) համար պատասխանատու մարմինը

-Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու կամ որոշումներ կայացնելու համար պատասխանատու մարմինների բազում մոդելներ կան: Որոշները բաղկացած են բացառապես դատավորներից, մյուսները՝ դատավորներից եւ ոչ դատավոր անդամներից: Շատ երկներում առկա չեն հատուկ մասնագիտացված մարմիններ, փոխարենն ապավինում են սովորական դատական ընթացակարգերին կամ տրիբունալներին, որոնք բաղկացած են բարձր ատյաններում գործող դատավորներից:

-Մոդելի ընտրությունն առավելապես կախված է կոնկրետ երկրի իրավական համակարգից: Այնուամենայնիվ, դատական համակարգի, դատավորների անկախությունը երաշխավորելու դեպքում (համար) նման մարմնի ձեւավորումը (դրա կազմը), որը պատասխանատու է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու կամ որոշումներ կայացնելու համար, չի կարող լինել այնպիսին, որը կնպաստի դատավորների նկատմամբ որոշումների կայացման ընթացքում կիրառվող ապօրինի ներազդեցությանը՝ լինի դա իշխանության այլ ճյուղերի, թե դատական իշխանությունից դուրս այլ դերակատարների կողմից:

-Այդ իսկ պատճառով, նման մարմինը չպետք է բաղկացած լինի ամբողջապես ոչ դատավոր անդամներից:

Կարգապահական տույժեր (պատասխանատվություն)

-15 իրավական բոլոր համակարգերը պետք է նախատեսեն կարգապահական պատասխանատվության հետեւանքների՝ նրբորեն կանխատեսելի (մատչելի) շրջանակ, որպեսզի երաշխավորվի կարգապահական մեղադրանքի (արարքի) բնույթին համաչափ պատասխանատվություն (տույժ): Այդ հետեւանքները չպետք է սահմանափակվեն միայն տույժերով, այլեւ պետք է ներառեն ոչ պաշտոնական խորհրդատվություն (քննարկում), ուսումնական վերապատրաստում, ինչպես նաեւ, հնարավորության դեպքում, ռեաբիլիտացիայի ընձեռում:

-Որոշ դեպքերում դատավորի հետ ոչ պաշտոնական քննարկումը նրա դրսեւորած վարքագծի վերաբերյալ կարող է բավարար լինել լուծելու խնդիրը՝ զերծ մնալով պաշտոնական կարգապահական գործընթացների նախաձեռնումից:

Արդար դատաքննություն եւ իրավական պատշաճ ընթացակարգ

-Արդար դատաքննության սկզբունքներն ու պատշաճ իրավական ընթացակարգն առնվազն ներառում են մեղադրանքի մասին տեղեկացվածության, հակադարձելու (հակափաստարկներ ներկայացնելու) իրավունք, դատավարության մասնակցության իրավունք, ապացույցների հետազոտման իրավունք, ապացույցներ ներկայացնելու իրավունք, իրավաբանական օգնության (ներկայացուցչության) իրավունք, լսված լինելու իրավունք, անմեղության կանխավարկածի հարգում եւ բողոքարկման կամ դատական վերանայման իրավունք:

-Կարգապահական պատասխանատվության գործընթացը պատասխանատու մարմնի կողմից պետք է հստակորեն ձեւակերպվի գրավոր եւ ստանա ճիշտ կիրառում՝ վերը նշված սկզբունքներին համապատասխան:

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱԹՈՌԻՆ

44-օրյա պատերազմից երկու տարի անց նախաքննական մարմինը 10 զինվորականների դեմ հարուցված քրեական գործով որոշում է կայացրել:

Գրիգորի Ներսեսյանին,
Կարեն Ավագյանին,
Սուրեն Բրուդյանին,
Ռոման Ռաֆիկ Դավթյանին,
Սուրեն Մեջլում Բաղդյանին,
Համլետ Թաթուլ Իսպիրյանին,
Աղասի Լյովա Սարգսյանին,
Սասուն Սամվել Ամիրզյանին,
Կարն Կամո Ստեփանյանին:
Գեւորգ Արարատ Տիտանյանին

մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, 29.09.2020 թվականից մինչեւ 01.03.2021 թվականը հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի հրաձգային գումարտակի հրամանատար, ՀՀ կառավարության 27.09.2020 թվականի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ հրաժարվել են զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, այն է՝ Հայաստանի Հանրապետության ՊՆ թիվ Ն զորամասի հրամանատարի 18.10.2020 թվականի թիվ մարտական կարգադրության, Արցախի Հանրապետություն մեկնելուց եւ ՀՀԶԽ հրամանատարի անմիջական ենթակայության տակ անցնելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի չկատարմամբ. 21.10.2020 թվականին Վայոց ձորի մարզի Գետափ գյուղի հարակից տարածքից վերադարձել են զորամասի տեղակայման վայր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՐԱԿՈՑ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, հայ-ադրբեջանական սահմանագոտու արեւելյան հատվածում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի կրակոցից հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող, շարքային Պ. Խ.-ն: ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ վիրավոր զինծառայողի վիճակը գնահատվում է ծայրահեղ ծանր:

ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ 14 ԴԵՊՔ

ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիրի Թունաբանության եւ մանկական վերակենդանացման կլինիկայում շմոլ գազից թունավորման կասկածանքով նոյեմբերի 9-ի գիշերը հոսպիտալացվել են նույն ընտանիքի 3 երեխա (3, 5, 7 տարեկան): Շմոլ գազից թունավորվել է նաեւ երեխաների մայրը, որը առաջին բուժօգնություն է ստացել նույն կլինիկայում: Համալսարանական մասնագետների կողմից որոշվել է երեխաների թունավորման մակարդակը, նշանակվել է բարոթերապիա՝ հիպերբարիկ օքսիգենացիա: Բուժման արդյունքում երեխաների մոտ գրանցվել է դրական դինամիկա: Բժիշկները երեխաների առողջական վիճակը գնահատում են բավարար: Նրանք այսօր դուրս կգրվեն բուժհաստատությունից: Նշենք, որ մեկ շաբաթում «Մուրացան» հիվանդանոցային համալիրում շմոլ գազից թունավորման երկրորդ դեպքն է: Օրեր առաջ՝ նոյեմբերի 5-ին, հոսպիտալացվել էր նաեւ 10 քաղաքացի՝ 7 երեխա եւ 3 մեծահասակ: Ստանալով համապատասխան բուժօգնություն՝ նրանք բավարար վիճակում դուրս էին գրվել համալսարանական հիվանդանոցից: Հաշվի առնելով վերջին մեկ շաբաթում գրանցված դեպքերի թիվը՝ համալսարանական մասնագետները մեկ անգամ եւս հորդորում են ուշադիր լինել գազախողովակներին, գազով աշխատող սարքերին, դրանց օգտագործմանը, տեսնել՝ արդյոք լիարժեք ապահովում են արտանետումը, թե ոչ, քանի որ շատ դեպքերում խնդիրը հենց դրա հետ է կապված լինում, ինչպես նաեւ տեղադրել ազդանշանային սարքեր: Անհրաժեշտ է հաճախակի օդափոխել բնակարանը, հատկապես՝ խոհանոցը, որտեղ գազօջախն անընդհատ վառվում է, լինել զգոն:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ԻՐԱՑՆՈՒՄ

Օրերս քրեական ոստիկանության աշխատակիցները ստացել էին հերթական տեղեկությունը, որ նոյեմբերի 4-ի առավոտյան մայրաքաղաքի Ռուբինյանց եւ Աիարոնյան փողոցների խաչմերուկում ձերբակալեցին եւ, իրենց մեքենաներով հանդերձ, ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին տեղափոխեցին 29 եւ 31 տարեկան երկու տղամարդու: Հիմնավոր կասկած կար, որ նրանք ապօրինի պահում, օգտագործում եւ իրացնում են թմրանյութ: Հետագա միջոցառումներով հայտնի դարձավ, որ մեքենաներից մեկում կա թմրանյութ, որը պատրաստվում էին իրացնել տելեգրամյան ալիքի միջոցով: «Նիսան»-ի զննությամբ հայտնաբերվեցին փայլաթիթեղե 160 փաթեթներ, որոնք լցված էին «շոկո» տեսակի թմրանյութով: Ընդհանուր քաշը կազմեց 228,5 գրամ: Նշանակվել է փորձաքննություն, նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲԵՐԴԻ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ

Նոյեմբերի 10-ի վաղ առավոտյան ձերբակալվել է Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանը, որը 2021 թվականի նոյեմբերի 9-ից մինչեւ 2022թ. հոկտեմբերի 9-ը անազատության մեջ էր: Հ. Մանուչարյանի պաշտպան Արման Թամրազյանին հայտնի չէ, թե ինչ պատճառով են ձերբակալել Հ. Մանուչարյանին: Հ. Մանուչարյանը նոյեմբերի 10-ին պետք է վարեր համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը, Հ. Մանուչարյանի ձերբակալվելու պատճառով ավագանու նիստը վարել է նորընտիր ավագանու անդամներից տարիքով ավագը՝ Համայակ Ադամյանը: Սեպտեմբերի 25-ին կայացած Բերդի ավագանու ընտրություններում հաղթած «Ջորավոր համայնք» դաշինքը ավագանու առաջին նիստում Բերդ համայնքի ղեկավարի պաշտոնում առաջադրել է «Ջորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 3-րդ համար, 52-ամյա Աստղիկ Հակոբյանին, որը ՀՕՖ-ի երեխաների իրավունքների պաշտպանության Մարտիգյան կենտրոնի ղեկավարն է: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն առաջադրել է Վահրամ Սուքիասյանի, «Արժանապատիվ սերունդ» դաշինքը՝ Արթուր Սաֆարյանի թեկնածությունը: Բաց քվեարկությամբ 11 քվե է ստացել եւ Բերդ համայնքի ղեկավար ընտրվել Ա. Հակոբյանը, Վ. Սուքիասյանը ստացել է 8, Ա. Սաֆարյանը՝ 2 քվե: Ա. Հակոբյանի երդմնակալությունը կկայանա նոյեմբերի 13-ին, Բերդի ավագանու հաջորդ նիստը՝ նոյեմբերի 16-ին:

ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներկայումս Դիլիջան քաղաքում ընթանում են Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի 5կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Վերանորոգվող հատվածը սկիզբ է առնում Դիլիջանի ոլորաններից եւ ձգվում մինչեւ Դիլիջանի օղակաձեւ հատված՝ Մ-4 եւ Մ-8 միջպետական ճանապարհի հատման կետ: Ծրագրով նախատեսված են մայթերի կառուցում, հենապատի նորոգում, ասֆալտբետոնե ծածկի տեղադրում, ճանապարհին առկա կամրջի նորոգում, անվտանգության տարրերով ճանապարհի կահավորում: Պետական բյուջեից այդ նպատակով հատկացվել է մոտ 1 միլիարդ դրամ: Նախատեսված է հիմնանորոգումը ավարտել մինչեւ ընթացիկ տարվա վերջ: Հայտնի չէ, թե ճանապարհաշինական որ ընկերությունն է կատարում այդ աշխատանքները. այդ մասին հիմնանորոգվող հատվածում տեղեկատվական ցուցանակներ տեղադրված չեն: Դիլիջան քաղաքում ընթացող ճանապարհի հիմնանորոգումն անհարմարություն է պատճառում մասնավոր ավտոմեքենաներով եւ հասարակական տրանսպորտով երթեւեկողներին: Նորոգման պատճառով ճանապարհաշինարարները պարբերաբար փակում են ճանապարհը, որի հետեւանքով ավտոմեքենաների մեծ կուտակումներ են լինում: Երեւան-Իջեւան երթուղային միկրոավտոբուսի վարորդը հայտնեց, որ ճանապարհի նորոգման պատճառով մի քանի օր առաջ ինքը ստիպված է եղել փակված հատվածի մոտ մոտ մեկ ժամ սպասել, մինչեւ որ ճանապարհաշինարարները բացել են ճանապարհը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ԿՏԱՆ

Armlur.am-ը ՀՀ կառավարության պատճառնական կայքից տեղեկացավ երեկվա արտահերթ նիստում ընդունված որոշումների մասին, որտեղ օրակարգի չգեկուցվող հարցերի շրջանակում կառավարությունն ընդունել է մի շարք որոշումներ:

Գործադիրը որոշել է փոփոխություններ եւ լրացումներ կատարել «ՀՀ 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում եւ համապատասխան որոշման մեջ եւ 1,449,852.0 հազար դրամ հատկացնել Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի եւ Տավուշի մարզպետարաններին: Որոշման նպատակը Հայաստանի համայնքներում սուբվենցիոն ծրագրերի արդյունավետ իրականացումն է. հատկացվող գումարը կուղղվի շինարարական կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների կատարմանը:

Կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Համաձայնագրով բյուջետային աջակցության ծրագրի ներքո Հայաստանին կտրամադրվեն 100 մլն եվրո վարկային միջոցներ, որոնք կուղղվեն «ՀՀ 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակը ներառում է հարկաբյուջետային պլանավորման, թափանցիկության, ռիսկերի կառավարման, պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, պետություն-մասնավոր գործընկերության համակարգի բարեփոխումները, պետական գնումների համակարգի արդիականացումը, կանաչ տնտեսության քաղաքականության մշակումը եւ այլն:

Գործադիրի որոշումներով՝ «Քանաքեռի կարի ֆաբրիկա», «Դրիմի դոմս», «Բեստպակ», «Բարսիս», «Ալեքս Սոկս» ՍՊԸ-ները եւ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամն ազատվել են գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի եւ (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես՝ ներմուծման մաքսատուրքից: Նշված արտոնության կիրառումը կխթանի նոր ներդրումային ծրագրերի իրականացումը, աշխատատեղերի ստեղծումը, տեղական արտադրությունն ու արտահանումը:

Հավանություն է տրվել ««Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջեւ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին օրենսդրական նախաձեռնությանը եւ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել են Սահմանադրական դատարան:

Մեկ այլ որոշմամբ գործադիրը հավանություն է տվել ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողով: Փոփոխությունները պայմանավորված են դեպի երրորդ երկրներ արտահանման սահմանափակման կարգավորումները «ԵԱՏՄ մասին» պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա ապահովել ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը ԵԱՏՄ միասնական տնտեսական տարածքում:

Կառավարությունը որոշում է ընդունել Ժնեւի ազգագրության թանգարանին ցուցադրության համար երկու հայկական դուդուկ նվիրաբերելու մասին: Որոշումն ուղղված է համաշխարհային քաղաքակրթության համատեքստում հայկական հնագույն մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակմանը, ինչպես նաեւ մեր տարածաշրջանի հարեւան երկրների կողմից հայկական դուդուկի մշակութային պատկանելության հնարավոր յուրացման սպառնալիքների չեզոքացմանը:

Գործադիրի որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը, որով հստակ սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց կացարանով ապահովման մեխանիզմները եւ միջոցները:

Ն.Հ.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է

ԿՈՅՈՒՂԻՆ ԾԱԾԿԵԼ Է ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԸ

Ներքին Չարբախի գերեզմանատան տարածքով է անցնում Երեւանի գլխավոր կոյուղատար համակարգը: Հսկայական խողովակների վնասվելու պատճառով կոյուղաջուրը լցվել է հարակից գերեզմաններ ու ամբողջությամբ ծածկել: Ճահճացած տարածքին մոտենալն անհնար է:

Կոյուղաջուրը նաեւ հոսել է հարակից մշակովի հողատարածքներ: Քաղաքապետարանը «Վեոլիա ջուր» ընկերության հետ նախաձեռնել է լուծել տասնամյակների խնդիրը: Այժմ ջրի հոսքը դադարեցվել է մինչեւ խնդրի վերջնական լուծումն ու տարածքի բարեկարգումը:

Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության վարչությունից՝ նշելով, որ այժմ ջրի հոսքը դադարեցվել է:

«Կոյուղու վնասվելու պատճառով մոտ 20 գերեզմանատեղի անցել է եղեգների տակ»,- նշել է գերեզմանատան վարիչը:

Խնդիրն ավելի քան տասը տարվա պատմություն ունի: Երեւանի քաղաքապետարանը նախաձեռնել էր տարածքի մաքրում, սակայն խողովակաշարի վերականգնումն ու կոյուղատարի սպասարկումը «Վեոլիա ջուր» ընկերության տիրույթում է:

««Վեոլիա ջուր» ընկերությունն է պատը դրել, որ կոյուղաջուրը գերեզմանատեղիներ չհոսի, մինչեւ հետագայում իրենք մրցույթով խնդիրը լուծեն: Մեր կողմից էլ հետագայում հսկողություն կսահմանվի, որ այդպիսի դեպք չկրկնվի»,- նշել է «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Հրաչյա Նազարյանը:

«Ուզում ենք ճահճի չորացումից հետո մաքրել ու բացել տարածքը: Գերեզմանատերերն էլ են պահանջում, որ այս խնդիրը լուծվի»,- ասել է գերեզմանատան վարիչ Սուրեն Ասպոյանը:

Կոյուղաջրի հոսքը պահող պատը ժամանակավոր լուծում է. այն հոսում, լցվում էր հարակից Արարատի մարզի մշակովի հողատարածքներ: «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը դեռ ամիսներ առաջ հողաթմբով պատնեշել էր ջրի հոսքը, բայց մի գիշերում այն կրկին բացվել էր: Թե ով էր արել եւ ինչու՝ չգիտեն, իսկ հարակից տարածքների բնակիչներն ասում են, որ նախկինում իրենց տարածքը ոռոգել են հենց այդ ջրով:

Օրերը տաքանալուն պես գարշահոտությունն այստեղից տարածվում է հարակից բնակավայրեր: Բնակչության անվտանգության եւ քաղաքի բնապահպանական խնդիրը լուծելու համար քաղաքապետարանը պատրաստ է կիրառել հնարավոր բոլոր միջոցները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 22-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 10-ին որոշում է ստորագրել Հակոբ Ավագյանին Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնից ազատելու մասին: Որոշման մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հակոբ Ավագյանին ազատել Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնից: Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սլավիկ Սարգսյանին»:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Հակոբ Ավագյանն ազատման դիմումը գրել է դեռ նոյեմբերի 4-ին, սակայն նոյեմբերեւի 10-ին նոր որոշումը պաշտոնապես հաստատվեց:

Հիշեցնենք նաեւ, որ դեռ ապրիլին ArmLur.am-ը գրել էր՝ սեւ ամպեր են կուտակվել տնօրեն Հակոբ Ավագյանի գլխին: Մեր տեղեկություններով՝ գործադիրն Ավագյանին պաշտոնանկ անելու ներքին որոշում ուներ, բայց դա անելու համար այդ ժամանակ որեւէ ձեւ ու միջոց չէր գտնում: Ստացվում է՝ ավելի քան 8 ամիս հետո նոր կառավարությունը գտավ Ավագյանից «ազատվելու» միջոցը:

Ն.Հ.

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ Է

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) Հայաստանում իրականացրել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) արտաքին գնահատման փորձագիտական գնահատում:

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) փորձագիտական խումբը դրական եզրակացություն է տվել ՈԱԱԿ-ի գործունեությանը՝ եվրոպական չափորոշիչներին եւ ուղենիշներին համապատասխանության առումով:

Փորձագիտական գնահատման հիման վրա՝ 2022 թվականին ՈԱԱԿ-ը դիմել է կրկին անդամակցելու Որակի ապահովման եվրոպական ռեգիստրին (EQAR): Տրված եզրակացության հիման վրա՝ Որակի ապահովման եվրոպական ռեգիստրը (EQAR) եւս 5 տարի ժամկետով հաստատել է ՈԱԱԿ-ի անդամակցությունը:

ՈԱԱԿ-ի գրանցումն EQAR-ում հայաստանյան բարձրագույն կրթական համակարգն առավել տեսանելի է դարձնում միջազգային ասպարեզում: ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրված ՀՀ բուհերի զեկույցները հասանելի են նաեւ Արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների եվրոպական շտեմարանում (DEQAR), որի միջոցով ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային ուսանողները կարող են համապարփակ տեղեկատվություն ստանալ հավատարմագրված ուսումնական հաստատությունների մասին եւ որոշում կայացնել իրենց ուսումնառության վերաբերյալ:

Որակի ապահովման եվրոպական ռեգիստրը (EQAR) ցանց է, որը միավորում է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում որակի ապահովման չափորոշիչներին եւ ուղենիշներին համապատասխան գործող որակի ապահովման գործակալությունները:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

FINTECH360 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

2022 նոյեմբերի սկզբին Երեւանում կայացավ FINTECH360 միջազգային համաժողովը, որին մասնակցում էին տարբեր երկրների բանկային, SS, վճարային համակարգերի, հեռահաղորդակցության ոլորտի, մասնագիտացված ասոցիացիաների 200 ներկայացուցիչներ:

Ֆինանսական տեխնոլոգիաների շուկայում արդի միտումների եւ նորարարությունների քննարկման միջազգային հեղինակավոր հարթակ դարձած FINTECH360 համաժողովն անցկացվեց Holiday Inn Yerevan Republic Square հյուրանոցի դահլիճում «Յունիբանկ» ԲԲԸ-ի եւ «Յունիստրիմ» միջազգային դրամական փոխանցումների համակարգի աջակցությամբ:

FINTECH360-ի բացմանը ելույթ ունեցան ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը եւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Դավիթ Սահակյանը: Շնորհակալություն հայտնելով Հովհաննես Խաչատրյանին եւ Դավիթ Սահակյանին ուշադրության եւ աջակցության համար՝ «Յունիբանկ»-ի խորհրդի նախագահ Գագիկ Ջաքարյանը նշեց Հայաստանի բարձր ներդրումային գրավչությունը եւ թափանցիկ ու բաց տնտեսական քաղաքականությունը:

Համաժողովի գործնական ծրագիրը բացեց էլեկտրոնային փողերի եւ դրամական փոխանցումների շուկայի մասնակիցների ասոցիացիայի նախագահ Վիկտոր Դոստովը՝ ներկայացնելով բանկերի ռազմավարությունն ու մարտավարությունը թվային հեղափոխության դարաշրջանում:

«Յունիբանկ»-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը կիսվեց արհեստական բանականության բազայի վրա հիմնված սքորինգի ներդրման հաջող փորձով: «Յունիբանկ»-ն առաջիններից էր Հայաստանում, որ ավտոմատացրեց առանց գրավի սպառողական վարկերի հայտերի ուսումնասիրությունը եւ բացառեց որոշում կայացնելիս մարդկային գործոնը: AI տեխնոլոգիայի ներդրմամբ «Յունիբանկ»-ը երկու անգամ բարձրացրեց վարկային պորտֆելի որակը՝ հաստատելով ստացած հայտերի ավելի քան 50%-ը:

Բանկային ոլորտում AI եւ նեյրոնային ցանցերի գործնական կիրառման թեման շարունակեց Արհեստական բանականության զարգացման լաբորատորիաների ասոցիացիայի փոխնախագահ Ռոբերտ Վասիլեւը:

DPP Group-ի հիմնադիր եւ գործադիր տնօրեն, Home Credit բանկի նախկին տնօրեն Դմիտրի Պեշնեւ-Պոդոլսկին հանդես եկավ վերջին ժամանակների ամենաքննարկվող թեմաներից մեկի՝ ապառիկ վճարման ծառայությունների վերաբերյալ «BNPL-ը համաշխարհային շուկայում. Առաջին հիասթափությունները եւ անորոշ ապագան» զեկույցով:

Մեկ այլ արդիական թեմա է բանկերի եւ այլ վարկային կազմակերպությունների պրակտիկայում տվյալների օգտագործման հեռանկարները: Digital Caramel-ի հիմնադիր Արսեն Սուլթանյանը, OpenBusiness-ի գործադիր տնօրեն եւ հիմնադիր Յուլյա Լոկոտկովան եւ Ucom-ի ֆինանսական տնօրեն Սիմոն Առաքելյանը քննարկեցին Big Data-ի ընձեռած հնարավորությունները ֆինանսական հաստատությունների հաճախորդների վարքագծային բնութագրերը վերլուծելիս:

Earlyone-ի հիմնադիր եւ տնօրեն Գեւորգ Սաֆարյանը ներկայացրեց «Հաճախորդների փորձը phygital-ում. մանրածախ բանկերի ապագան» զեկույցը:

Պանելային քննարկումները FINTECH360 համաժողովի ծրագրի կարեւոր մաս են: Մասնակիցների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց անհպում վճարումների եւ մոբայլ ծառայությունների զարգացմանը նվիրված քննարկումը: Պանելի մոդերատորն էր Վիկտոր Դոստովը: Քննարկմանը մասնակցեցին ArCa վճարային համակարգի տնօրեն Իշխան Մխիթարյանը, «Յունիբանկ»-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը, «Յունիստրիմ» բանկի վարչության նախագահ Կահիրժան Կուդյարովը եւ STAK Money Transfer-ի խորհրդի նախագահ Վախթանգ Աբրահամյանը:

Մեկ այլ պանելային քննարկում, որը վարում էր OpenBusiness-ի գործադիր տնօրեն եւ հիմնադիր Յուլյա Լոկոտկովան, կենտրոնացած էր նեոբանկերի ապագայի վրա: Bedford Pay LTD-ի տնօրեն Վլադիսլավս Բորովիկսը, ECA Countries-ի գործադիր տնօրեն, Senteo Inc-ի ավագ գործընկեր Ալեքսեյ Վերետենովը եւ Դմիտրի Պեշնեւ-Պոդոլսկին կարծիքներ փոխանակեցին այս թեմայով:

Համաշխարհային գլոբալիզացիայի միտումը նույնպես օրակարգում էր, որը ներառում էր բարձր մասնագիտացված մոբայլ հավելվածների վերափոխումը մարքեթփլեյսների եւ բանկային էկոհամակարգերի: Ինտեգրման հեռանկարները եւ արագ փոփոխվող տնտեսական լանդշաֆտին հարմարվող բանկերի խնդիրներն իրենց զեկույցներում քննարկել են WaveAccess-ի նախնական վաճառքի մենեջեր Սերգեյ Պոնոմարենկոն, ECA երկրների կառավարիչ տնօրեն, Senteo Inc-ի ավագ գործընկեր Ալեքսեյ Վերետենովը, Skolkovo Fintech Hub-ի տնօրեն Պավել Նովիկովը:

«Յունիստրիմ» բանկի վարչության նախագահ Կահիրժան Կուդյարովը կիսվեց իր գործնական փորձով՝ խոսելով այն մասին, թե ինչպես են փոխվում աշխատանքային միգրանտների կարիքները թվայնացման դարաշրջանում: Նա նշեց, որ եթե 2021 թվականին «Յունիստրիմ»-ում օնլայն ծառայության մասնաբաժինը կազմում էր 41%, ապա 2022 թվականին այն արդեն կազմում է 55%: Այս տարի մոբայլ հավելվածի ներբեռնումների թիվն ավելացել է 8 անգամ: «Կանաչ» ֆինտեխը ESG օրակարգի շրջանակներում. սա պանելային հերթական քննարկման թեման էր, որը վարում էր ՖԻՆԱՐՄ ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի տնօրեն Կարեն Ջաքարյանը: PwC Armenia-ի գործադիր տնօրեն Ալեքսեյ Ռուսանովը, Climate Finance and Institutes-ի ավագ խորհրդատու Տիգրան Սուքիասյանը, «Յունիստրիմ» բանկի խորհրդի անդամ Ելենա Ռեչկալովան խոսել են «կանաչ» ներդրումների շուկայի արագ աճի եւ զարգացման մասին:

«Ներդրումային հնարավորությունները եւ արժեթղթերի շուկաները» քննարկման շրջանակներում տեղի ունեցավ մտքերի ինտենսիվ փոխանակում: Մոդերատորի դերը ստանձնել էր FEAS-ի գլխավոր քարտուղար Կոնստանտին Սարոյանը: Քննարկմանը մասնակցում էին POD Consulting FFF-ի տնօրեն Ֆիլիպ Դելմոտը, BPIFRANCE-ի Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի հատուկ խորհրդական Ժերոմ Կլաուզենը, AMX-ի գործադիր տնօրեն Հայկ Եգանյանը, AICA&CrowdVentures-ի համահիմնադիր Սամսոն Ավետյանը, ANIF-ի ARFI հարթակի ղեկավար Էդգար Էվոյանը: Արմբրոկի պորտֆելային մենեջեր Դմիտրի Դորոֆեեւը կիսվեց թեմայի վերաբերյալ իր տեսլականով. նա հանդես եկավ «Պորտֆելային ներդրումներ ֆիզիկական անձանց համար. փոփոխությունների ժամանակը» թեմայով զեկույցով:

ENFINT-ի գլխավոր խորհրդատու Սվետլանա Մարկովան խոսեց բանկերում մեքենայական ուսուցման մոդելների ներդրման պրակտիկայի մասին՝ պիլոտային ծրագրից մինչեւ արդյունաբերական հարթակի ստեղծում:

Renaissance Capital-ի Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների գլխավոր տնտեսագետ Սոֆյա Դոնեցը ներկայացրեց «Մեծ ջրհեղեղը եւ տնտեսական աճի հայկական տապանը» թեմայով զեկույցը:

«Թվային արժույթների ներդրման մոտեցումները եւ կենտրոնական բանկերի դերն այդ գործընթացում» թեմայով պանելային քննարկումը վարում էր ՀՊՇ-ի վարչության նախագահ Ալմա Օբաեան:

Համաժողովը չի շրջանցել նաեւ կիբերանվտանգության կարեւոր խնդիրը, որը սերտորեն կապված է Open Banking հայեցակարգի հանրահռչակման հետ: Քննարկումը վարում էր Earlyone-ի հիմնադիր եւ տնօրեն Գեւորգ Սաֆարյանը, փորձագիտական կարծիքներով հանդես եկան CyberHUB-ի համահիմնադիր, SoftConstruct-ի ռազմավարական խորհրդատու Սամվել Մարտիրոսյանը, Ռազմավարական հետազոտությունների եւ նախաձեռնությունների վերլուծական կենտրոնի համահիմնադիր, մեդիա փորձագետ, տեղեկատվական անվտանգության մասնագետ Տիգրան Քոչարյանը, InfoSec-ի հիմնադիր եւ տնօրեն Կարեն Գասպարյանը, «Արմսոֆթ»-ի ավագ խորհրդատու, ՀԱՀ դասախոս Արա Չալաբյանը:

Համաժողովի ավարտին VisionLabs-ի կոմերցիոն տնօրեն Իլյա Ռոմանովը ներկայացրեց ֆինանսական ոլորտում մարդակենտրոն տեխնոլոգիաների եւ մեքենայական տեսողության կիրառման նոր միտումները:

Ինտենսիվ քննարկումներից հետո FINTECH360-ի մասնակիցներին ներկայացվեց Հայաստանի պատմական ժառանգությունը: Մշակութային հարուստ ծրագիրը ներառում էր նաեւ էքսկուրսիաներ Գառնի եւ Գեղարդ: Պատվիրակներին սպասում էր լավաշ թխելու մաստեր-կլաս եւ ավանդական ըմպելիքների համտես՝ հայկական դուդուկի դյութիչ հնչյունների ներքո:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴՈՒԵՏ՝ ՍԼՈՎԱԿ ԵՐԱԺՇՏԻ ՀԵՏ

Երգչուհի Սոնե Սիլվերը երկար դադարից հետո հանդես է եկել նոր աշխատանքով: Երգչուհին այս անգամ համատեղ աշխատանք է ներկայացրել ազգությամբ սլովակ երաժիշտ Dee Pete-ի հետ: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց Սոնեն:

Սոնեի խոսքով՝ սլովակ երաժշտի հետ համագործակցության առաջարկությունը եղել է հենց նրա կողմից. «Առաջարկությունը՝համատեղ աշխատանք ներկայացնելու, ստացել եմ հենց Dee Pete-ից, քանի որ նա հավանել էր իմ ձայնային տվյալները եւ ցանկություն էր հայտնել ինձ հետ համագործակցելու: Իրականում մեր համագործակցությունը շատ հեշտ է ստացվել, ինչի համար շատ ուրախ եմ: Երգի հետ կապված շատ դրական եւ գեղեցիկ արձագանքներ եմ լսել: Եթե հիշում եք, ես իմ երաժշտական կարիերան սկսել եմ անգլերեն երգերով, սակայն 2019 թվականից սկսեցի երգել նաեւ հայերեն: Կարծում եմ՝ յուրաքանչյուր արտիստի համար կարեւոր է իր լսարանի արձագանքը»:

Երգչուհին մեզ հետ զրույցում ասաց, որ այս պահին բավականին գերծանրաբեռնված գրաֆիկով է աշխատում. «Աշխատում եմ իմ սիրելի մասնագիտությամբ, դասավանդում եմ «Շառլ Ազնավուրի» արվեստի պետական քոլեջում, դրան զուգահեռ անում եմ նոր ձայնագրություններ, նկարահանումներ: Այս ամենին զուգահեռ, իհարկե, չեմ մոռանում նաեւ սպորտով զբաղվելու մասին»,-նշեց երգչուհին՝ միեւնույն ժամանակ ընդգծելով, որ աշխատում է մի քանի հետաքրքիր նախագծերի վրա եւ պատրաստվում է թողարկել նոր ալբոմ:

Ի՞նչ է սպասվում առաջիկայում. Սոնեն ասաց, որ այս պահին աշխատում է մի քանի հետաքրքիր նորությունների վրա, սպասվում են տարբեր համագործակցություններ, որոնց մասին փակագծեր բացել չի ցանկանում:

«Այնպես որ, կարծում եմ՝ իմ հանդիսատեսին այնքան էլ շատ սպասեցնել չեմ տա»,-հավելեց նա:

Նշենք, որ ավելի վաղ Սոնեն իր ֆեյսբուքյան էջում գրել էր. «Սիրելինե՛րս, մեծ ուրախությամբ ձեզ եմ ներկայացնում մեր նոր աշխատանքը ազգությամբ սլովակ տաղանդավոր երաժիշտ, գործիքավորող Dee Pete -ի հետ:

Սիրով եմ ընդունել առաջարկը, քանի որ deep house ժանրը իմ տարերքն է, ու ես հավերժ երգելու եմ նաեւ այս ժանրում: Երգը թողարկվել է աշխարհահռչակ Warner Music label-ին պատկանող Power House label-ում»,- հայտնել է նա:

Սոնե Սիլվերի փոխանցմամբ՝ երգը կարճ ժամանակահատվածում հասցրել է սիրվել արտասահմանյան լսարանի կողմից, ինչը մեծ ձեռքբերում է նրա համար. «Ուզում եմ՝ դուք եւս գնահատեք եւ գրեք ձեր կարծիքները»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ Է ԿԱՏԱՐԵԼ

4 մեգավատ հզորությամբ եւ շուրջ 6 հեկտար տարածք զբաղեցնող «Սոլիս» ֆոտովոլտային արեւային էլեկտրակայանը գտնվում է Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքում:

Կայանն աշխատում է արդեն ինն ամիս եւ միացված է Հայաստանի էլեկտրական ցանցերին: Էկոլոգիական տեսանկյունից արտանետումների խնայողությունը կազմում է տարեկան մոտ 3200 տոննա՝ համարժեք մոտավորապես 120,000 ծառ տնկելուն: Կայանը շահագործման է հանձնել «Եվրամիություն-Հայաստան ՓՄՁ» հիմնադրամը:

«Սոլիս» արեւային էլեկտրակայանն առաջին ծրագիրն է, որ ֆինանսավորվել է «Ամբեր Կապիտալ» ընկերության կողմից կառավարվող «Եվրամիություն-Հայաստան ՓՄՁ» բաժնեմասնակցային հիմնադրամի միջոցներով, որտեղ էլ ներդրում է կատարել «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ»-ը: Ընկերությունը կուտակային կենսաթոշակային «Հավասարակշռված» եւ «Պահպանողական» ֆոնդերի միջոցներից ներդրում է կատարել տնտեսության իրական հատվածում: «Ամունդի-Ակբա»-ի ներդրումը կազմում է «Եվրամիություն-Հայաստան ՓՄՁ» ֆոնդի ընդհանուր միջոցների շուրջ 10%-ը:

2020-ի ընթացքում «Եվրամիություն-Հայաստան ՓՄՁ» ֆոնդը «Սոլիս» կայանին ֆինանսավորել է 2,9 մլրդ դրամով: Ներդրման 830 մլն դրամը կազմում են ֆոնդի միջոցները, մնացածը՝ շուրջ 75%-ը, ֆոնդը ներգրավել է փոխառու միջոցների հաշվին: Սա նաեւ նշանակում է, որ «Ամունդի-Ակբա»-ի կողմից կառավարվող «Հավասարակշռված» եւ «Պահպանողական» ֆոնդերի շահառուները անուղղակիորեն նաեւ էլեկտրակայանի բաժնետեր են՝ ընկերության կատարած ներդրման համամասնությամբ:

«Մեր ընկերության համար շատ կարեւոր է ունենալ ներդրումային միջավայր եւ հնարավորություն ունենալ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի միջոցներն ուղղել տնտեսության իրական հատված: Մի կողմից մենք կառավարում ենք ապագա կենսաթոշակառուների գումարները, եւ ցանկացած ներդրում պետք է համապատասխանի օրենսդրությանն ու մեր չափանիշներին, մյուս կողմից, տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարելով, մենք նպաստում ենք տնտեսության զարգացմանը եւ նոր աշխատատեղերի ստեղծմանը: Բացի այդ, ցանկացած ներդրում պետք է ունենա երկարաժամկետ եկամտաբերություն եւ համապատասխանի ESG՝ «բնապահպանություն, սոցիալական քաղաքականություն եւ կառավարում» չափանիշներին, որոնք պետք է զարգացնել Հայաստանում: Մենք կարողացանք ներդրում կատարել ֆոնդի ստեղծման պահին եւ այսօր «Եվրամիություն-Հայաստան ՓՄՁ» ֆոնդում առաջին մասնավոր ներդրողն ենք՝ 6 միլիոն դոլար ներդնելու հանձնառությամբ: Սա մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդ է, որը ներդրումներն իրականացնելու է տնտեսության իրական հատվածում հայկական ընկերություններում տնտեսական գործունեություն զարգացնելու նպատակով»,- նշել է «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ընկերության տնօրեն Ժան Մազեջյանը:

«Մեզ բախտ վիճակվեց ունենալ «Ամունդի-Ակբա»-ի նման ներդրող, որն ի սկզբանե մեզ աջակցեց եւ համաձայնեց ներդրում անել եւ դառնալ մեր հիմնական ներդրողներից մեկը: Կայանի պանելները երկկողմանի են, ինչը թույլ է տալիս ունենալ ավելի բարձր արդյունավետություն եւ ավելի բարձր արտադրանք 1ք/մ-ից: Մեր պլանային արտադրանքը տարեկան լինելու է 7.5-7.8 միլիոն կիլովատ ժամ, որը թույլ կտա մատակարարել 4000 տնային տնտեսությունների էլեկտրաէներգիա»,- նշում է «Սոլիս» ՍՊԸ տնօրեն, «Եվրամիություն-Հայաստան» ֆոնդի ներկայացուցիչ Կարեն Արաբյանը:

ԼՈՒՐԵՐ

ԿՄԵԿՆԵՆ ԳԵՐՄԱՆԻԱ

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացել է Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը՝ Գերմանիայում կայանալիք հյուրախաղերին ընդառաջ: Համերգի ընթացքում նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան) հանդես է եկել գերմանացի դիրիժոր Ֆիլիպ Ամելունգի ղեկավարությամբ, որի հրավերով նվագախումբը մեկնել է Գերմանիա: Որպես մենակատար հանդես է եկել Գինեսի ռեկորդակիր, ճանաչված ջութակահար Նիկոլայ Մադոյանը, ծրագրում՝ Ֆելիքս Մենդելսոն, Էդուարդ Բաղդասարյան, Ռուբեն Ալթունյան, Էդվարդ Միրզոյան: Գերմանիայի Դաշնությունում հյուրախաղերը կանցկացվեն նոյեմբերի 10-18-ը: Հյուրախաղերի շրջանակում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, նվագախումբը Գերմանիայի Դաշնության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի խորհրդարանում՝ Լանդթագում, հանդես կգա «Հայաստանի օր» միջոցառմանը, ինչպես նաեւ երեք համերգով կմասնակցի «Իկինգ» փառատոնին: Նախատեսված է եւս երկու համերգ Նաումբուրգ եւ Մագդեբուրգ քաղաքներում:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Sotheby's աճուրդում վաճառվել է լեգենդար գերմանացի ավտոարշավորդ Միխայել Շումախերի «Ֆերարի» F2003-GA բոլիդը, որով նա նվաճել էր 6-րդ չեմպիոնական տիտղոսը «Ֆորմուլա-1»-ում: Գրանցվել է ռեկորդային գին այսպիսի մեքենաների համար՝ 14,8 միլիոն դոլար: Սպասվում էր, որ բոլիդը կվաճառվի 9,3 միլիոն դոլարով, սակայն 40 րոպե տեւած սակարկման ժամանակ զգալիորեն աճել են առաջարկները: Նախորդ ռեկորդը «Ֆորմուլա-1»-ի բոլիդների համար գրանցվել էր 5 տարի առաջ, երբ 7,5 միլիոն դոլարով վաճառվել էր «Ֆերարի» F2001:

ԲԵՆԶԵՄԱՆ ՀԻԱՍԹԱՓՎԱԾ Է

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին խոսել է թիմի ֆրանսիացի հարձակվող Քարիմ Բենզեմայի մասին, որն ընդգրկվել է աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հայտացուցակում եւ կմասնակցի նոյեմբերի 20-ին Քաթարում մեկնարկելիք աշխարհի առաջնությանը: Ազդրի վնասվածքից հետո Բենզեման մի քանի շաբաթ դուրս չի եկել խաղադաշտ: «Բենզեման հիասթափված է, քանի որ լավ մարզավիճակում չի մեկնում աշխարհի առաջնության: Նա չի ունեցել խաղային պրակտիկա եւ լավ վիճակում չէ: Քարիմն անհատական մարզումներ է անցկացնում: Բենզեմային անհանգստացնում է այն, որ չունի հնարավորություն օգնելու մեր թիմին վերջին խաղում մինչեւ աշխարհի առաջնությունը»,-ասել է Անչելոտին: Հոկտեմբերի 19-ից հետո Բենզեման մասնակցել է մեկ հանդիպման՝ կես ժամ անցկացնելով շոտլանդական «Սելթիկի» (5:1) դեմ Չեմպիոնների լիգայում: Իսպանիայի առաջնության 14-րդ տուրում «Ռեալը» նոյեմբերի 10-ին կընդունի «Կադիսին»:

● *Նոյեմբերի 11-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Օտարը» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է ներկայացվում շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը:

Կարեն Յավրյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահումով խաղի կազմակերպչի կողմից ներկայացված շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի կամ դրանում կատարվող փոփոխությունների, լրացումների համաձայնեցումն իրականացվում է՝ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Շահումով խաղի կազմակերպիչը շահումով խաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը կամ դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ նախքան դրանց կիրառումը՝ ներկայացնելով լիազոր մարմին երկու օրինակ: Լիազոր մարմինը 15-օրյա ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգին, առաջարկվող փոփոխություններին, լրացումներին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի կանոնակարգի կամ փոփոխությունների, լրացումների համաձայնեցված մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգին կամ դրա փոփոխություններին, լրացումներին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շահումով խաղի կազմակերպիչը ներկայացնում է նաեւ շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների ծագման սերտիֆիկատների պատճենները եւ շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձեւի, այն դեպքում, երբ փոփոխվում են շահումով խաղերի վերաբերյալ տվյալներ, որոնք չեն հակասում համաձայնեցված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր կարող են օգտվել ուսման վարձի փոխհատուցման համար վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի հնարավորությունից:

Գայանե Կարապետյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսման վարձի փոխհատուցման նպատակով վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի իրավունքից կարող են օգտվել ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ կառավարության հաստատած մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում եւ օրդինատուրայում սովորող (ուսանող), վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձինք: Նշված արտոնությունից կարող են օգտվել ՀՀ քաղաքացիները: Ընդ որում՝ վարձու աշխատող հանդիսացող ուսանողը կարող է օգտվել միայն մեկ մասնագիտություն ձեռք բերելու համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված են ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի, ասպիրանտուրայի եւ օրդինատուրայի այն մասնագիտությունները, որոնցից որեւէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկն ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Առավոտից Երեւանի փողոցները ողողված են Նիկոլ Փաշինյանի նկարով թռուցիկներով, որոնց վրա գրված է՝ դավաճան:

ArmLur.am-ի ֆոտոխցիկը ֆիքսել է թռուցիկները՝ գետնին թափված: Թե ովքեր են ակցիայի հեղինակները, հայտնի չէ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: